կար պիտի գրեմ Քեզ. խնդրում եմ համբերութեամբ կարդա՛ իւրաքանչիւր գիւղի և կատարող հարստահարութիւնների մասին, որոնց մասամբ ինքս ականատես եմ եղել, իսկ մի մասն էլ գրի եմ առել քէդխուդաների, քահանաների և ուսուցիչ-ուսուցչուհիների տուած տեղեկութիւններից։

Նախքան գիւղերի նկարագրութիւնը, պիտի ասեմ Քեզ սիրելիս, որ այս գաւառի գիւղերի ընդհանուր պատկերը համարեա նոյնն է, շատ քիչ տարբերութեամբ. այդ դու կը տեսնես իմ նկարագրութիւնների ընթացքում։ Այժմ կը տամ ես Քեզ նրանց պատկերները։

*
* *

ՆԱՄԱԿԵՐՏ

—

Նոր—Զուղայից դէպի արևմուտք, 21¼ ֆարսախ հեռաւորութեան վրայ ընկածէ Փէրիա գաւառի ամենամեծ, հայաբնակ այս գիւղը, որն իր գեղանի սահմանների վրայ հիւրընկալում է բազմաթիւ պարսկաբնակ և հայաբնակ գիւղեր, այսպէս արեւելքից՝ Դարան. արեւմուտքից՝ Սֆտիկան և Դրախտակ. հիւսիսից՝ Նարխալաջ և Հուսուր. հարաւից՝ Գուլամիր։

Գիւղն աչքի է ընկնում իր գեղեցիկ դիրքով. փռուած է մի ընդարձակ, բանաստեղծական հովտում, որի արևելեան և արևմտեան կողմերից շարքով տնկուած սուերախիտ սնոբարիների, ուռենիների և բարդիների փէշերից ոռոգելով՝ ոլորապտոյտ անցնում են երկու քոյր գետակներ—Մեծ չայ և Պզտիկ չայ. դրանք յայտնի են իրենց զուլալ և սառնորակ ջրերով և անուշահամ ձկներով։ Մեծ չայն սկիզբ է առնում Քէյլիզուց և ոլորապտոյտ հոսելով, ոռոգում է Նամակերտի արևելեան մի մասը, ապա պտոյտներ գործելով կտրում է Ղառղունի և Սվարանի դաշտավայրերն ու գնում միանում Զայենդէրուդին և նրա հետ անցնում դէպի Նոր—Զուղա։ Իսկ Փոքրիկ չայը բղխում է Կէնջէ պարսկական գիւղից և օձապտոյտ հոսելով Նամակերտի արևմտեան ծառազարդ ափերից՝ միանում է Մեծ չային և նրա հետ գրկախառնւե-